Շահնազարեանի քննութեան համեմատ պէտք է ընդունել թէ Մովսէս Կաղանկայտուացին կամ ժամանակակից է ամբողջ այս շրջանին, այսինքն Վաչագան Բ-ի մինչև Եղիազար (505–690), հարիւր ութսուն և հինգ տարուան միջոց մը և աւելի ևս որովհետև 505ին՝ Վաչագան Բ-ի թագաւորութեան ժամանակ՝ դարձեալ պատմութեան համեմատ՝ Մովսէս ականատես եղած էր մոգերուն տանջանարաններուն. (Մով. Կաղ. Ա. հատ. էջ 144)։ Արդ՝ այնպիսի դէպքի մը ականատես ըլլալու և յետոյ ալ զայն յիշել կարողանալու համար՝ պէտք է որ Մովսէս գոնէ 10–15 տարեկան եղած ըլլար. որով կը գտնուի անոր ծննդեան մօտաւոր թուականը՝ 490–495։ Ինչ որ ալ ըլլայ անկարելի է որ Մովսէս 195–200 տարի ապրած ըլլայ և հետևաբար անկարելի է նաև որ ժամանակակից եղած ըլլայ այն դէպքերուն և այն շրջանին։

Ե

Մովսէս Կաղանկայտուացին ապրած է տասներորդ դարուն. և ասոր ապացոյց այն է՝ թէ իր պատմութիւնը կը հասցնէ մինչև տասներորդ դար, բնաւ պատճառ մը չունինք ըսելու համար թէ Աղուաններու պատմութեան երրորդ գիրքը նոյն Մովսէսէն չէ, այլ ուրիշ Մովսէսի մը շարադրութիւնը. քանի որ գրքին վերտառութիւնը այդպիսի բան մը չ'յայտներ, այլ ընդհակառակը կը հաստատէ թէ միևնոյն հեղինակին գործն է. « Մովսիսի « Կաղանկայտուացւոյ երրորդ գիրք պատ- « մութեան Աղուանից »։

Նոյն իսկ Շահնազարեան այս կարծիքն ունեցած է՝ արդէն ընդունած ըլլալուն համար թէ Մովսէս եօթներորդ դարէն է։ Արդ՝ քանի որ կը հաստատուի թէ Մովսէս այն շրջանին ժամանակակից չկրնար ըլլալ, անհիմն կը մնայ Շահնազարեանի այս հետևութիւնն ալ՝ թէ Աղուանից պատմութեան երրորդ գիրքը նոյն Մովսէսէն չէ։

Ուրիշ ապացոյց կրնայ համարուիլ այն թէ Մովսէս կը յիշէ Բագրատունիները, այնպիսի տեղ մը՝ ուր պէտք չկար յիշելու և ուր միւս ցեղերուն կամ նախարարութիւններուն վրայ խօսք չկայ. « Աստ բարձաւ թագաւորութիւն « յԱրշակունեաց, և հայրապետութիւն ի « ցեղէ սրբոյն Գրիգորի։ Իսկ եթէ յաղագս « Բագրատունեացն կամեցիս գիտել, Պա- « ղոյր Սկայորդի կոչեցեալ Հրաչեայ՝ թա- « գաւոր Հայոց՝ որդի Հայկակայ, որ խըն- « դրեաց յարքայէն Բաբելացւոց զմի ոմն ի « գերելոցն Հրէից Շեբաթ անուն, զոր ածեալ « ընակեցոյց յերկրին Հայոց մեծաւ պա- « տուով։ Ի սմանէ սերեցաւ ազգն Բագրա- « տունեաց ի նուազել մեծագոյն ազգին Յա- « բեթականի »։

Կը տեսնուի որ Բագրատունի ցեղը մասնաւորաբար և առանձին՝ իբրև համապատիւ Արշակունեան ցեղին կը յիշուի ասոնցմէ վերջ. իբրև թէ Մովսէս ըսել ուզէր՝ թէ Արշակունիներէն վերջ կը թագաւորեն Բագրատունիները։ Բագրատունեան այս յիշատակութիւնն ուրեմն կ'ակնարկէ թէ այն ժամանակ՝ որ Մովսէս գրեց այս հատուածը՝ Բագրատունիք արդէն մեծ դեր ունէին մեր մէջ և արժանի էին մի միայն իրենք յիշատակուելու և իբրև Արշակունեաց յաջորդ նշանակուելու։ Բանաւոր է այս ժամանակն դնել Ժ դարուն՝ ուր Բագրատունիները կը տիրեն արդէն երկրին։

Ուրիշ ապացոյց մը դարձեալ։ — Կաղանկայտուացին կը յիշուի առաջին անգամ Ստեփաննոս Ասողիկէն ետք՝ ԺԱ դարուն վերջերը և աւելի ետք՝ յաջորդ դարերուն մէջ։ Ասողիկ որ Տիեզերական պատմռբիւն կը գրէ և որ կը յիշատակէ մեր պատմագիրները իր պատմութեան նախաբանին մէջ՝ չ'յիշեր Կաղանկայտուացին։ Այս ապացոյց է ուրեմն թէ Կաղանկայտուացին եթէ Ասողիկէն վերջ չէ, հապա անոր ժամանակակից է։

Զ

Եթէ Կաղանկայտուացին տասներորդ դարէն է, բնական է ուրեմն թէ այն դէպքերը որ կը պատմէ Աղուաններու պատմութեան առաջին ժամանակներուն վրայ, քաղուած ըլլան աւանդութենէ և մանաւանդ այլևայլ պատմագիրներէ. ինչպէս ինքն իսկ տեղ մը կը յայտնէ. « Յետոյգ և ի բուն պատմագրաց « այսպէս ծանեաք . . .»։

Դարձեալ, կան երեք գլուխներ որոնք բառացի օրինակուած են ուրիշ հնագոյն աշխատութիւններէ. մին իր յիշատակարանովը միասին։ Այսպէս էջ 221 կը կարդանք։

« Յառաջնում ամի հայրապետութեան Ա- « բասայ, տեսի ես անարժանս Վեհիկ ի « տեսլեան այր մի անապատական, որ ունէր « նշան սատուածային խաչի գրեալ. և ասէր « ցիս զանուն իմ։

« Եւ ասեմ. ո՞վ ես դու, Տէր, և նա ասէ « ցիս. ես եմ Պողոսիկ. արդ ելի, երկրպա- « գեա խաչիս, և մի մերձեսցիս ի սա։ Եւ « ես զարթուցեալ ի քնոյ . . . . Եւ ես